«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Դաստիարակ՝ Ալեքսանյան Անուշ Սամվելի

Մանկապարտեզ՝ «Լապտերիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1

Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ, ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ ԴՐԱՆՑ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ծեսի դերն ու նշանակությունը 5

1.2 Սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգականության փոխանցման ավանդական ձև 6

1.3 Ծիսակարգի առանձնահատկությունները 6

ԳԼՈՒԽ 2

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՅԱՆ ԾԵՍԵՐ

2.1 Հայ ավանդական՝ կրթահամալիրյան ծեսեր .....

2.2 Ազգային, ծիսական, շարժուն խաղերի նկարագրություն 9

2.3 Ծեսերի փորձարկումը մանկապարտեզներում 11

Եզրակացություն 17

Օգտագործված գրականություն 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Աշխատանքն արդիական է քանզի ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այսինքն յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը:

Դա է հենց պատճառը, որ հետազոտական աշխատանքի թեմա հանդիսացավ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» թեման:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Երեխան ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային
- Սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն ու ասիկները
- Սովորողը երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները
- Ծիսակարգը ուսումնասիրելիս ծանոթանում է տարածաշրջանային առանձնահատկություններին
- Արդյունքում վերականգվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**՝

- ծեսի հանրահռչակում
- գիտելիքի և փորձի փոխանակում
- ծեսի տարածաշրջանային առանձնահատկությունների յուրացում

- սովորողը դառնում է բանահավաք
- ծեսը դառնում է համատեղ ձեռքբերում

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում: Նրանք կազմում են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:

Հետազոտության իրականացման արդյունքում ակնկալում ենք երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքներ ձևավորել ու սերմանել: Մեր խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից՝ ազգային անգնահատելի արժեք ներկայացնող մեր ազգային տոներն ու ծեսերը:

ԳԼՈՒԽ 1

Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ, ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ ԴՐԱՆՑ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ծեսի դերն ու նշանակությունը

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

1.2 Սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգականության փոխանցման ավանդական ձև

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

1.3 Ծիսակարգի առանձնահատկությունները

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակային, գործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են:[1] «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ:

Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Կամ՝

[1] Ռ. Հարոյան, «Զատիկ» Քաջբերունի 1903թ., «Հայկական սովորություններ»

հարսանեկան արարողության ժամանակ խնձորի՝ որպես պտղաբերման խորհրդանիշ և այլն։

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով։ Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ։ Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»։[2]

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը։ Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ։ Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել։ Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական։ Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն։ Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերներն ունեն իրենց առանձնահատկությունները։ Դրանք բոլոր տոներում են առկա։ Ոչ մեկն ինքնանպատակ չէ։ Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները։

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն։ Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ։

---

[2] Հր. Խառատյան, «Ազգային ծեսեր, տոներ»

ԳԼՈՒԽ 2

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՅԱՆ ԾԵՍԵՐ

2.1 Հայ ավանդական՝ կրթահամալիրյան ծեսեր

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ համադրություն: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

2.2 Ազգային, ծիսական, շարժուն խաղերի նկարագրություն

Սուրբ Ծնունդ-Նոր տարի: Սուրբ Ծննդյան ծեսը սկսում ենք երգեր ու պարեր սովորելով: Միասին սովորում ենք ավանդական, ծիսական երգեր, պարերգեր՝ ծանոթանալով ամեն մի երգի, պարի պատմությանը: Սաները տանից բերում են ընկույզներ, պատրաստում ընկույզներով չարխափաններ, վզնոցներ: Միասին ուսումնասիրում ենք, քննում-զննում, վերլուծում, բացատրում, ապա բացում ենք ընկույզը ու մեջը դնում բարեմաղթանքներ, որոնք սաները նվիրելու են իրենց մայրիկներին: Ողջ ընթացքում սաները ծնողների հետ պարում են, երգում, հրճվում՝ շրխկացնելով ընկուզե չարխափանները, քշելով չարը կրթահամալիրից, տներից ու մեզնից: Նշեմ, որ ունեցանք այս տարի նորություն՝ տեսազանգ Ձմեռ պապիկի հետ, սաները զարմացած աչուկներով նայում էին էկրանին, իսկ Ձմեռ պապը նրանց հետ զրուցում էր, մեկ էլ հանկարծ հայտնվեց ու բաժանեց նվերները: Զարդարում ենք ծիսական ծառը և սեղանը, երգում, բարեմաղթանքներ հղում միմյանց: Կտրում ենք նախօրոք միասին թխած տարեգաթան ու որոշում այդ տարվա հաջողակին: Խաղում ենք ընկուզախաղեր՝ պտտում, հարվածում, գլորում, դե վերջում էլ՝ կոտրում ու համտեսում: Այս ողջ գործունեությունը սաների մոտ ձևավորում, ապա և զարգացնում է տարատեսակ կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև բացում գիտելիքի շտեմարանի այս դուռը դեպի հայ ավանդական ամանորյա սովորույթների ու ավանդույթների ակունքները:

Բարեկենդան: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Ուրախության, զվարճանքի ծես է, որը կապված է գարնան սկսվելու հետ: Ծեսի նպատակն է զվարճանալու, ուրախանալու, հրճվելու միջոցով վերակենդանացնել մարդուն, դիմավորել բնության զարթոնքը: Պարերի, խաղերի, զվարճությունների երկու շաբաթվա ընթացքում խաղում ենք տարբեր խաղեր ՝ ճոճախաղ, ընկուզախաղ, աքլորակռիվ և այլն: Կատարում ենք ուղտախաղ, ուղտի կերպարով տիկնիկ ենք պատրաստում և պարեցնում: Ուղտը փորձում է վազել երեխաներիի հետևից, բռնում նրանց, իսկ նրանք փախչում են այս ու այն կողմ: Պատրաստում ենք Ուտիս տատ և Ակլատիզ: Ուտիսը մեզ անընդհատ ասում է, որ յուղոտ ուտելիքներ ուտենք, իսկ Ակլատիզը՝ հակառակը: Ակլատիզը պատրաստում ենք սոխի գլխից, որի վրա խրում ենք չորս սպիտակ և երեք սև փետուր, որոնք խորհրդանշում են սև հողը և սպիտակ

ձյունը։ Ակլատիզի պարանոցից կախում ենք քարեր և կծու պղպեղ, որ եթե յուղոտ բան ուտի, քարն ընկնի գլխին, և բերանն այրվի պղպեղով։ Յոթ փետուրները խորհրդանշում են յոթ շաբաթները, որոնք ամեն շավաթ սաները հերթով պոկում են, իսկ վերջում Ակլատիզը թռչուն է դառնում և գնում։ Փայտե շերեփներով պատրաստում ենք զանազան տիկնիկներ և երգելով մեր տոնի ամենսիրված երգը՝«Գնացեք, տեսեք...»-ը՝ շրջում դպրոցով։ Սա է Բարեկենդանը...

Ծառզարդար-Զատիկ-Կրկնազատիկ։ Ծաղկազարդը նախորդում է Զատկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին ու Ակլատիզին։ Զատիկը ունի իր ծիսական ծառը, տիկնիկները և ծիսական զանազան խաղերը։ Ծառը խորհրդանշում է անցյալը, ներկան, ապագան։ Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվեր և թելերով կախում ծառի ճյուղերից։ Ձվերը խորհրդանշում են աշխարհը։ «Տի՛զ, տի՛զ, Ակլատի՛զ...» բացականչություններով հարվածում ենք Ակլատիզին և քշում նրան բակից։ Այս ծեսը մի քիչ նաև տեխնոլոգիական կարող ենք որակել։ Ծնողները մեզ հյուր են գալիս, ու սկսում ենք միասին պատրաստել զատկե ձվիկներ։ Սկզբում երկու կողմից փոքրիկ անցքեր ենք բացում ձվիկների վրա, ապա սաները փչելով դատարկում են ձվիկների պարունակությունը, զարգացնում ենք փչելու կարողությունը։ Փչում ու փչում են, բայց դեղնուցը դուրս չի գալիս, տեսնեք՝ ինչ ուժով ու ոգևորությամբ են փչում, ու ինչ ուրախություն, երբ վերջապես դեղնուցը դուրս է գալից անցքից։ Խառնում ենք մեզ մոտ եղած բոլոր գույներն ու ներկերը։ Խառնաշփոթը պատրաստ է։ Գույնե՛ր-գույնե՛ր...Բոլորով սկսում ենք զարդարել ներկերի տարատեսակ երանգներով։ Արդյունքում՝ բազմապիսի զատկե ձվիկներ։

Այսպիսով, բոլոր վերոնշյալ ծեսերով փորձում ենք զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական երևակայությունը, տարատարիք սովորողների հետ համատեղ խմբային և անհատական հետազոտական աշխատանքներ կատարելու, ուսումնական նախագծեր իրականացնելու, իրար հետ շփվելու, միջհամայնքային, միջմարզային կապեր հաստատելու, իրար ճանաչելու, իրար հետ սովորելու և միասին բազմաթիվ խնդիրներ լուծելու հմտություններն ու կարողությունները։

2.3 Ծեսերի փորձարկումը մանկապարտեզներում

Թեմա՝ Սուրբ Զատիկ

Նպատակը՝

- Ուսումնասիրել երեխայի խոսքի և հաղորդակցության զարգացման կարևորությունը նախադպրոցական տարիքում:
- գործնական փորձարկման միջոցով ցույց տալ ազգային տոներին ու ծեսերին երեխային մասնակից դարձնելով նրա խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացման հնարավորությունները:

Անհրաժեշտ պարագաներ

Ձվիկներ, զամբյուղներ, ներկեր, վրձիններ, զատկի տոնը խորհրդանշող ճյուղեր, նախապես աճեցված կանաչ խոտ:

Նախապատրաստական մաս

Օդափոխել խմբասենյակը, աթոռները դասավորել սեղանների դիմաց, երեխաներին բաժանել ձվիկներ ներկեր ու վրձիններ, խմբասենյակը զարդարել Զատկի տոնին համապատասխան, երեխաների ուշադրությունը կենտրոնացնելուց հետո հարցնել.

Ընթացքը

Խթանման փուլ

-Ի՞նչ տոն է այսօր մեզ մոտ.

Զատիկ կամ **Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝** քրիստոնյա եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Առաքելական Եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը, հինգ տաղավար տոներից մեկը:

-Ինչպե՞ս պիտի ողջունենք այսօր իրար.

Քրիստոնյաներն իրար ողջունում են, ասելով.

-Քրիստոս հարեավ ի մեռելոց…

-Օրհնեալ է հարությունը Քրիստոսի:

Երեխաները բոլորը ողջունում են իրար այս խոսքերով և սկսում են ներկել իրենց ձվիկները:

Ընթացքում երգում և արտասանում են նախապես սովորած ծիսական ասիկները, առածներն ու ժողովրդական ավանդական երգերը՝ նվիրված Սուրբ Զատկի տոնին:

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Հողմը փչեց ի հարավեն,
Ազատվեցին դաշտք ձյուներեն,
Բերկրություն է ամեն տղոց,
«Քրիստոս յարեավ ի մեռելոց»:
Առուները խոխոջացին,
Ծառերն ահա բողբոջեցին,
Օդը լի է ձայնիվ թռչնոց,
«Քրիստոս յարեավ ի մեռելոց»:
Տղա, աղջիկ ուրախ, զվարթ,
Փթթեցին զերդ կոկոմ վարդ,
Ոխ, քեն չունի սիրտը մարդոց,
«Քրիստոս յարեավ ի մեռելոց»:

Երեխա – Սբ Զատկից քառասունինն օր առաջ սկսվում է Մեծ Պասը: Պասի ընթացքում մարդիկ հրաժարվում են կենդանական ծագում ունեցող կերակուրներից՝ մսից, կաթնեղենից, ձկնեցենից, հավկիթներից, և ճաշակում են բուսական ծագում ունեցող կերակուրներ:

Երեխա – Սակայն շատ կարևոր է, որ պահքի ընթացքում մարդիկ ոչ միայն հրաժարվեն այս կամ այն անուշահամ ուտեստներից, այլև անցանկալի արարքներից՝ ծուլությունից, բարկությունից և միմյանց նկատմամբ լինեն ավելի ներողամիտ, զիջող, բարի, աշխատասեր, ինչպես նաև հաճախեն եկեղեցի և աղոթեն:

Երեխա – Հայաստանի որոշ վայրերում ընդունված է եղել Մեծ պասի առաջին օրը սոխից կամ կարտոֆիլից պատրաստել ակլատիզ, որը պահքի ընթացքում օրացույցի դեր է կատարել: Ակլատիզը զարդարել են յոթ փետուրներով, որոնք խորհրդանշել են Մեծ պասի յոթ շաբաթները: Շաբաթը լրանալուն պես փետուրներից մեկը պոկել են: Վերջին՝ յոթերորդ փետուրը պոկել են Զատկից մեկ օր առաջ, իսկ հաջորդ օրը տոնել են Զատիկը: Ակլատիզը սովորաբար դրվել է տան որևէ նկատելի անկյունում կամ կախվել է տանիքից և օրացույցի դեր է կատարել:

Երեխա

Ակլատիզը եկավ մեզ հյուր,

Վրան ունի յոթը փետուր:

ՇԱՐԱԿԱՆ՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Մահուամբ զմահ կոխեաց,

Եւ յարութեամբն իւրով

Մեզ զկեանս պարգեւեաց.

Նմա փառք յաւիտեանս. Ամեն:

Երեխա – Ավետարաններից իմանում ենք, որ Հիսուսի Հարության լուրն առաջինն իմանում են երեք հավատացյալ կանայք: Երբ նրանք գնում են քարայր, որտեղ դրված էր Հիսուսի մարմինը, տեսնում են, որ քարայրը դատարկ է, և շատ են զարմանում: Հանկարծ հայտնվում են երկու հրեշտակներ և ավետում, որ Հիսուս հարություն է առել: Ներս է մտնում հրեշտակի զգեստով մի երեխա և ասում (հնարավորության դեպքում կարելի է հրեշտակի դերակատարին հագցնել հրեշտակների զգեստներ): Երեխա – Ինչո՞ւ եք Հիսուսին այստեղ փնտրում, Նա այստեղ չէ, այլ հարութություն է առել:

Երեխաները ներակներին ավետիս են տալիս:

Երեխաներ - **ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ:**

Հանդիսատես - **ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ:**

Հրեշտակների պար (պարում են 3-4 երեխա «Բարի հրեշտակ» երգի երաժշտության ներքո): ԵՐԳ՝ «Բարի հրեշտակ» (Զարեհ եպս. Ազնավուրյան):

Բարի հրեշտակ

Բարի հրեշտակն այս առավոտ,

Թռչկոտելով անկողնուս մոտ,

«Ժպտուն, զվարթ մանկիկ,-ասաց,-

Ե՛լ և երգե Քրիստոս Հարյավ»:

Ուրախ երաժշտության ներքո գալիս է Ուտիս տատը՝ ծաղկավոր հագուստով և գոգնոցով, ձեռքին՝ կարմրաներկ հավկիթներով լի կողով:

Երեխա - Եկա՜վ, եկա՜վ, Ուտիս տատը եկավ:

Պարում է, ապա ձվերը ցույց տալով՝ ասում.

Ուտիս տատ - Բերեցի՛, Զատկի հավկիթները բերեցի՛: Տեսեք որքա՛ն գեղեցիկ են դրանք:

Ձվերը բաժանում է երեխաներին:

Երեխա - Տատի՛կ, ինչու՞ են ձվերը կարմիր ներկում:

Ուտիս տատ - Կարմիրը Քրիստոսի արյան գույնն է: Իմացեք նաև, որ Զատկի տոնին ընդունված է միմյանց շնորհավորելու հետ մեկտեղ ներկած ձվեր նվիրել՝ ասելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Իսկ վերցնողը պետք է պատասխանի. «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:

Երեխա - Ուտի՛ս տատի, ի՞նչ են պատրաստում Զատկի տոնին:

Ուտիս տատ – Զատկին եփում են չամչով փլավ:

Երեխա - Իսկ ինչու՞ են Զատկին չամչով փլավ եփում:

Ուտիս տատ - Որովհետև բրինձը խորհրդանիշն է համայն ժողովրդի, իսկ չամիչները՝ քրիստոնյաների:

ԵՐԳ՝ «Չամչով փլավ» (Ա. Մովսիսյան, Երեքից տասներեք, Երևան, 1999):

Կրկ. Անուշ արեք հատ-հատ ու լավ,

Հենց ձեր սիրած չամչով փլավ:

Ուտիս տատ - Զատկի սեղանը զարդարել են ոչ միայն ներկած ձուն, չամչով փլավը, ձուկը և գինին, այլև կանաչիներից պատրաստված աղցաններն ու տարբեր ճաշատեսակները, որոնք խորհրդանշում են գարնան զարթոնքը, զանազան ապուրներ՝ երինջապուրը, թանապուրը, փիփերթով ապուրը, չորաթանը:

Զատկի առածանի

1. Զատիկն էկավ, չունեմ կապա,

Ով նվիրի ինձ մի կապա,

Նրան կասեմ Հաջի պապա:

4. Հավը կուտե հատիկ-հատիկ,

Ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Երգ-պար

Յալալի

Յալալի, հրեշտակն ավետիս է տվել,

Յալալի, հավը հավկիթ է ածել,

Յալալի, հավկիթ կարմիր ենք ներկել,

Յալալի, ձուկը համով ենք եփել,

Յալալի, չամչով փլավ ենք կերել,

Յալալի, կարմիր գինի ենք բերել,

Յալալի, Զատկի մոմերն ենք վառել,

Յալալի, Տերն հարություն է առել:

Իմաստի ընկալման փուլ

Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին կիրակի օրը, որն ընկնում է մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 26-ը (35 օր) ժամանակահատվածի վրա:

Զատկին նախորդում է Ավագ շաբաթը: Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի կամ ճրագալույսի պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը:

Ժամերգություն է տեղի ունենում և Պատարագ մատուցվում և բուն զատկական Կիրակի օրը:

Զատիկը տոնվում է ներկված հավկիթներով, և շատ արևելյան ուղղափառ քրիստոնեության հետևորդների մոտ՝ պասկայով: Հայերի մոտ տեղի են ունենում նաև հավկթախաղեր:

Ամփոփում՝

Ներկայացրած բոլոր տեսական դրույթները կիրառեցինք գործնականում և համոզվեցինք, որ իրոք ծեսը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման ու հաղորդակցման համար:

Ծեսի կազմակերպման ընթացքում նրանք խոսում և հաղորդակցվում են անկաշկանդ, փոխանակում մտքեր ու կարծիքներ, պատմում շրջապատից լսած տեղեկություններ ու տալիս մեկնաբանություններ։

Նաև համոզվեցինք, որ ծիսական խաղերը ևս շատ դրական ձևով ազդեցին երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական ու մտավոր զարգացման վրա։

Կշռադատման փուլ

Երեխաները ըմբռնեցին ծեսի նշանակությունը և կարևորությունը, հարստացրին իրենց բառապաշար նոր բառերով։ Ծիսական խաղեր կազմակերպելիս նրանք ունեցան զգացմունքային տարբեր դրսևորումներ։

Երեխաները սիրով էին սովորում և երգում ծիսական երգերը։ Երգի հետ զուգընթաց նաև խաղում էին։ Սա երեխաների մոտ ձևավորեց որոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելով հայ մշակույթի արմատներին։ Նրանք հեշտորեն կարողացան յուրացնել ազգային երգն ու պարը՝ դրանց միջոցով արտահայտելով իրենց զգացմունքները։ Երեխաները ավելի սիրով և ուշադրությամբ սկսեցին սովորել, երբ իմացան, որ այդ երգերը երգել են իրենց մեծ պապիկներն ու տատիկները։

Տնօրենը և մանկավարժը դիտելով պարապմունքը, եկան այն եզրահանգման, որ երեխաներին մեծ հաճույք էին պատճառում խմբակային և երկխոսության տեսքով կազմակերպված երգ-խաղերը։ Նրանք սիրով գովում էին միմյանց, օրհնանքներ ասում, իրար նվիրում ճյուղեր, քաղցրավենիք, ձվիկներ և այլն։ Ծիսական երգ ու երաժշտությամբ ողողված այս ջերմ մթնոլորտը մեծ ազդեցություն գործեց երեխայի խոսքի զարագացման բոլոր ասպեկտների վրա։

Նրանք պատմեցին, մեկնաբանեցին, համեմատեցին, թե ինչը ինչպես են անում իրենց ընտանիքի մեծերը։

Այս ամենը դրական ազդեցություն ունեցավ երեխաների լեզվամտածողության վրա։ Երեխաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ աշխատանքի շնորհիվ, դարձան լիիրավ մասնակիցներ, որոշակի կարողություններ ու հմտություններ ձեռք բերելով՝ յուրացրին ծեսը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսումնասիրելով ու վերլուծելով ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում, գալիս ենք այն եզրահանգման, որ ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար:

Հետազոտական աշխատանքի կատարման վերջնարդյունքում կարող ենք փաստել՝

- Երեխաները սիրով էին սովորում և երգում ծիսական երգերը: Երգի հետ զուգընթաց նաև խաղում էին: Սա երեխաների մոտ ձևավորեց որոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելով հայ մշակույթի արմատներին:
- Սաները հեշտորեն կարողացան յուրացնել ազգային երգն ու պարը՝ դրանց միջոցով արտահայտելով իրենց զգացմունքները:
- Երեխաները ավելի սիրով և ուշադրությամբ սկսեցին սովորել, երբ իմացան, որ այդ երգերը երգել են իրենց մեծ պապիկներն ու տատիկները:
- Նրանց մեծ հաճույք էին պատճառում խմբակային և երկխոսության տեսքով կազմակերպված երգ-խաղերը:
- Ծիսական երգ ու երաժշտությամբ ողողված այս ջերմ մթնոլորտը մեծ ազդեցություն գործեց երեխայի խոսքի զարագացման բոլոր ասպեկտների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հր. Խառատյան, «Ազգային ծեսեր, տոներ»
2. Ռ. Հարոյան, «Զատիկ» Քաջբերունի 1903թ., «Հայկական սովորություններ»
3. Մ. Ղազարյան, Ա. Համբարձումյան, «Պատկերազարդ տոնացույց»
4. Ա. Սարգսյան, «Ազգային տոներ»
5. Հ. Խառատյան, «Հայ ժողովրդական տոները»
6. Վ. Բդոյան, «Հայ ժողովրդական խաղեր»
7. Գ. Ա. Հակոբյան, «Ներքին Բասենի ազգագրությունը»
8. Բ. Առաքելյան, Է. Կարապետյան, Ս. Հարությունյան, Կ. Մելիք-Փաշայան, Ա. Նազինյան, Դ. Վարդումյան, «Հայ ազգագրություն և բանահյուսություն»
9. Ռ. Հ. Գրիգորյան, «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր»
10. Արամ Ղանալանյան, «Հայ շինականի աշխատանքի երգերը»
11. Ն. Մովսիսյան, «Տոնացույց»